ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/34» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 01052798) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարիքների համար գրասենյակային գույքի և էլեկտրական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 16-րդ չափաբաժինների մասով:

«ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 19.10.2023թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից eauction.armeps.am էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտում աճուրդի հրավերով պահանջվող փաստաթղթերում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Մասնավորապես, մասնակցի կողմից ներկայացված դիմում հայտարարությունում պատվիրատուի անվանումը, չափաբաժինների համարները և ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացակայում է Հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը:

Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) N 1 հավելվածի 41-

րդ կետը՝ «ՎԱ-ԱԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/34» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման նիստը և ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից նույն օրը (19.10.2023թ) eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակիցներին ուղարկել անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել փաստաթղթերի շտկված տարբերակները:

Ս.թ. հոկտեմբերի 23-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակից «ԴՈՆԵՌ» ՍՊԸ -ն սահմանված ժամկետում չի ուղարկել փաստաթղթերի շտկված տարբերակները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշեց մերժել «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի համաձայն:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշեց նախաձեռնել գործընթաց՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» պարբերության (խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 16-րդ չափաբաժինների մասով գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը):

Միաժամանակ, Հանձնաժողովը որոշեց հաստատել էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման և 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 16-րդ և 19-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստերը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում***:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները՝ Պատվիրատուն արձանագրում է, որ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ն՝ կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում իր կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելով՝ խախտել է ***գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը,*** ինչը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը*:*

Վարչապետի աշխատակազմի կողմից 23.10.2023թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է հայտարարություն՝ «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 16-րդ և 19-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարվելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ